

# Բ.

## Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

### ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՅՈՂԱՆՆՈՒ ՄԱՅՐԱԳՈՄԵՑԻՈՅ

(Օրբէլեանի աղբիւրներից)

# Ա.

Օրբէլեանի իւր պատմութեան ԻԸ. գլխի մէջ խօսուած է Կարնոյ ժողովի և Յոհան Մայրագոմեցու մասին տարրեր նկարագրութեամբ, քան Սերէոս, Յոհան կաթողիկոս, Ասողիկ ևլն: Օրբէլեանին նման են պատմուած միայն ԺԳ. դարու առաջին քառորդում ապրող Զաքարիա Ծործորեցին և Պորէն Սահառունին. առաջինը գրել է ժողովոց պատմութիւն, իսկ երկրորդը ժամանակագրութիւն վարդապետացն Հայոց: Տարաբաղդարար ոչ մէկը և ոչ միւսը դեռ երևան չեն եկած ձեռագիրների մէջ, թէև նրանց մնացորդներից օգտուել է Զամչեանը Կարնոյ ժողովի մասին գրելիս\*:

Մեզ թուում է, թէ գտել ենք Օրբէլեանի աղբիւրի հետքը: Երուսաղէմի Հայոց մատենադարանի № 1272 ձեռագրի մէջ զբտնում է «Պատմութիւն Յոհաննու Մայրագոմեցոյ» վերնագրով մի գրութիւն\*\*, որ տարաբաղդարար թերի է. հատակոտորի թիթև համեմատութիւնը Օրբէլեանի ԻԸ. գլխի հետ ցոյց է տալիս գրական ակներև առնչութիւն երկուսի մէջ: Կասկած չկայ, որ օգտուողը Օրբէլեանը կարող է լինել և ոչ ընդհակառակը. նոքա նոյնանում են ոչ միայն ընդհանուր բովանդակութեամբ, այլ և տեղ տեղ բառացի, բացառութեամբ այն մասերի, որ Օրբէլեան առել է Յոհան պատմագրից և Ասողիկից: Օրբէլեան մինչև իսկ փոխում է այն մասը, որ ձեռնտու չէր Սիւնեաց աթոռի ուղղափառութեան

\* Զամչ. Հատոր Ա. եր. 49. Հատոր Բ. 528, 538.

\*\* Այս եւ ուրիշ նիւթեր գրել էինք հանդուցեալ Կարապետ եպիսկոպոսի արամաղբու թեան տակ իւր «Յոհան Մանդակունի եւ Յոհան Մայրագոմեցի» յօդուածը գրելիս. Նոյակաթ. Ա. 4945.

հոչակին. մինչդեռ մեր «Պատմութիւնը» պարզութեամբ յիշում է, թէ Կարնոյ միութիւնից յետոյ, Մաթուսաղան Դուին է եկել ձեռնադրուելու Եզրից, «և միաբանեցան ամենեքեան և միահաւատ եղեն» բացի Մայրագոմեցուց և նորա աշակերտներից, Օրբէլեանը Մաթուսաղայի եպիսկոպոսութիւնը ժողովի և Եզրի ստիպմամբ է ցոյց տալիս և նորա Սիւնիք դառնալուց յետոյ՝ աւելացնում, թէ «ամենայն ջանիւ զգուշացոյց զվիճակն իւր խմորիլ յազանդն Քաղկեդոնի»: Մենք ուրիշ անդամ էլ առիթ կունենանք ցոյց տալու, որ Օրբէլեան Սիւնեաց աթոռին և իւր տոհմին վերաբերեալ խնդիրներում զէպքերին ցանկալի գունաւորութիւն է տալիս կամ դժուարութիւնները հարթում ինչպէս այստեղ:

Բացի դորանից մեր պատառիկն ունի այնպիսի նորութիւններ, որ Օրբէլեանից առնել չէր կարող, ինչպէս Ստաթէոս Ամատունեաց եպիսկոպոսի յիշատակութիւնը, Հերակլի Վաղարշապատ գալը և հաղորդութիւնը կաթողիկէում Կարնոյ ժողովից առաջ, Մայրագոմեցու և նորա աշակերտների հալածուիլը Ներսէս Տայեցու կողմից, Մայրագոմեցու համեմատութիւնը Ենովք երանելու հետ\*, Հայոց և Ասորոց միութիւնը Կարնոյ ժողովից առաջ: Սրանց մէջ կան նորութիւններ, որ միայն այս աղբիւրից ենք տեղեկանում:

Բայց առնչութեան խնդիրը պարզելու համար աւելի կարևորն այն է, որ Եր. № 1272 ձեռագիրը, որից հանուած է մեր պատառիկը, գրուած է 1290 թուին, մինչդեռ Օրբէլեան իւր պատմութիւնը փակել է 1299 թուին: Աւելացնենք նաև, որ մեր ձեռագրի Բարսեղ գրիչը, հաւանօրէն, Կիլիկիայից էր, որ իւր յիշատակարանը թուագրում է միայն Հեթում Բ-ի և նորա հարազատների յիշատակութեամբ, շեշտելով միանգամայն և Հեթումի բարութիւնը. թուում է, թէ յիշատակարանի հեղինակը անձնապէս ծանօթ է թագաւորին: Բարսեղ անունով մի գրիչ 1294 թուին ապրում էր Դրազարկում\*\*, իսկ Դրազարկը Ռուբինեանց տոհմական գերեզմանատունն էր և նրանց անմիջական խնամքը վայելող մի վանք:

Օրբէլեանի և մեր գրութեան սերտ առնչութիւնը պարզելուց յետոյ՝ փորձենք որոնել այդ աղբիւրը աւելի հնազոյն ժամանակների մէջ: Օրբէլեան ինքը տալիս է դորա համար հարկաւոր ցուցումը. նա պատմելով Կարնոյ ժողովի զէպքերը, յիշում է Մաթուսաղայի թղթի աղբիւրը. «զրէ թուղթ (Մաթուսաղան)

\* Համ. Կաղանկատուացի. հրատ. Մկրտիչ Էմինի. Մոսկուա. 1860. եր. 215:

\*\* Ձեռ. էջմ. մատ. № 20, 599<sup>p</sup>.

վասն հաւատոյ որ է ի Տօնանամակին, զոր և աստէն կարգեցար», և ապա մի այլ տեղ բացատրում, որ այդ Տօնանամակի կամ Տօնականի հեղինակն էր «հարանց հայրն Սաղօմ», «որ և յօրինեաց զսլաշատացուցիչն տօնից տէրունականաց և զյիշատակս մարտիրոսաց զՏօնականն ի 150 թուին Հայոց»\*: Քուականի մօտաւոր ճշդութեան համար ապացոյց կարող է ծառայել, որ 726-ի Մանգղիերտի հայրերից մէկն էր՝ ըստ Chabot-ի հրատարակած Միքայէլ Ասորու՝ Սողոմոն վանահայր Մաքենացոց\*\*։ Տօնականի կարգաւորութեան հեղինակի մասին տեղեկութիւն ունինք և ուրիշ ազրիւրներից։ Վանական վարդապետի Հարցմունք\*\*\* վերնագրով, աշխատութեան մէջ, որ կազմուած է զպրոցական նպատակների համար հարց ու պատասխանի ձևով, և ուշադրութեան արժանի է իւր ազգագրական, պատմական և մատենագրական տեղեկութիւններով, կայ այսպիսի մի հատուած.

«Հ. Չհայադիր գրեանքս ձվ է կարգեալ. Պ. Տաւնականն Մաքենացի հայրն Սողոմոն, զՏաւնացուցակն Վարդա հայրն Ատոմն, զՏաւնապատճառն կարմրջաձորոյ (s!) հայրն Սամուէլ».

Մայրագոմեցու կեանքի և կարնոյ ժողովի գէպքերի նկարագրութիւնը Մաթուսողայի թղթի հետ մի միութիւն պիտի կազմէր Սողոմոն Մաքենացու կազմած Տօնականի մէջ, որտեղից և քաղած պիտի լինի Օրբէլեանը։ Չէ որ Տօնականները սրբոց վկայարանութիւնների կամ նրանց գործունէութեան համապատասխան ճառերի ժողովածունք են, որոնք յետագայ ճառընտիրների և Յայսմաուրքների հիմքն են կազմել. Սողոմոն Մաքենացին ուրիշ առթից ևս երևում է որպէս ազրիւր Մայրագոմեցու կեանքի հետ կապուած խնդիրների, ուրեմն և ոչ անհաւանական, որ նրա վկայարանութիւնը կամ Պատմութիւնը զնէր իւր Տօնականում։

## Բ.

Արդէն յիշեցինք, որ Օրբէլեանի պատմուածքը կարնոյ ժողովի մասին տարբեր է մեր պատմիչների տուած տեղեկութիւններից. թէև նա օգտուել է Յովհաննէս կաթողիկոսից և Ասողկից,

\* Օրբ. հրատ. Շահնազարեանի. Ա. եր. 475.

\*\* Երուանդ վ. Տէր Մինասեանց, Հայոց եկեղեցու յարարերու-թիւնները ասորոց եկեղեցիների հետ. ս. էջմիածին. 1908. եր. 494.

\*\*\* Տանկահայրից բերուած նոր ձեռագիրներից № 4515.

† Օրբէլեան. Ա. 444.

բայց առաւելագէտ մեր վերոյիշեալ աղբիւրից\*։ Ժամանակակից Սերէոսը պատմելով Եզրի միութեան մասին, մինչև իսկ չէ յիշում Կարին անունը։ Կաթուղիկոսը յունաց զօրավար Մժէժ Գնունու ստիպմամբ գնում է «յերկիրն Ասորեստանի» և այնտեղ է կատարւում այդ միութիւնը։ Յովհաննէս կաթուղիկոս կրկնելով Սերէոսի տեղեկութիւնները, տեղի մասին, անցնում է լուսթեամբ. բայց աւելացնում է ուրիշ աղբիւրից նոր տեղեկութիւններ Յոհան փակակալին հետը չտանելու, Եզրի տգիտութեան, Եզրի և Յոհան փիլիսոփայի ընդհարման և ապա վերջնիս նախ Մայրոց վանք և ապա Գարդման տեղափոխուելու մասին։ Առաջին անգամ պատմիչներից Կարնոյ անունը յիշում է Ասողիկ, մնացած մասերում ըստ ամենայնի հետևելով Յոհաննէս կաթուղիկոսին։ Սամուէլ Անեցին որոշ կերպով շեշտում է ժողովը կարնում գումարուելու մասին, համառօտելով Յովհաննէս կաթուղիկոսի և Ասողիկ պատմածը։ Գանձակեցին կրկնում է Սամուէլի պատմածը, Կարնոյ անունն յիշատակութեամբ, օգտուելով Յովհաննէս կաթուղիկոսից և Ասողիկից, և իւր կողմից աւելացնում է Եզրի կատարած ծիսական փոփոխութիւնները։ Վարդան օգտուել է Գանձակեցուց, յիշելով Կարին քաղաքը և համառօտելով միւս պատմիչների տեղեկութիւնները։

Այսպիսի պայմաններում կարող է կասկած զարթնել նոյն իսկ Կարնոյ ժողովի իրական լինելու վերաբերութեամբ։ Արդեօք կայ մի հնագոյն աղբիւր, որտեղից Ասողիկ առած լինի Կարին քաղաքի անունը։ Դժուար է այս հարցին պատասխան տալ, եթէ աչքի առաջ ունենանք միայն Ասողիկ այն հատուածը, որ վերաբերում է այդ քաղաքի անունն հետ կապուած ժողովին։ Բայց նա մի ուրիշ հատուածի՝ Օձնեցու պատմութեան\*\* համար՝ օգտուել է «Սակս ժողովոց, որ եղեն ի Հայք» վերնագրով գրութիւնից, որտեղից և առած պիտի լինի իւր տեղեկութիւնը ժողովը կարնում գումարուելու մասին։ Այս գրութիւնը Չամչեանի կողմից կոչուած է «ազաւաղ և անկարգ», և ծանօթութեան մէջ ճգնել է ցոյց տալ անվաւեր\*\*\*։ Բայց Խոսրովիկ Թարգմանչի և Chabot-ի Միքայէլ Ասորու բնագրի հրատարակութիւնից յետոյ, ոչ մի կասկած չի կարող լինի այդ գրութիւնը 726 թուին գումարուած Մանաղկերտի ժողովի վաւերագրութիւններից մէկն է, թէև կարօտ ձեռագիրների համեմատութեամբ աւելի ստոյգ բնագրի հրատարակութեան։ Աւելացնենք

\* Համեմ. նաև Օրբ. Բ. 202։

\*\* Ասողիկ 104/3 համ. Գիրք Սղթ. 211. 222. 224.

\*\*\* Չամչ. Բ. 571.

նակ, որ Փոս պատրիարք 862 թ. Չաքարիա կաթողիկոսին զրած թղթի մէջ\* յիշում է Եզրի և Կարնոյ ժողովի մասին՝ հաւանօրէն օգտուելով իրենից առաջ եղած հայ աղբիւրներէց: Այսպիսով մեր հնագոյն տեղեկութիւնը Կարնոյ վերաբերութեամբ իբրև Եզրի միութեան ժողովատեղի, հասնում է մինչև Ը. դարու առաջին քառորդը:

Մի այլ տեսակէտով էլ պարզում է, որ մեր պրութեան հեղինակը Եզրի կամ Կարնոյ միութեան ականատես և ժամանակակից անձնաւորութիւն չէ. Արշակ Տէր Միքէլեան\*\*, Կարապետ եպիսկոպոս\*\*\*, Օրմոնեան † ինչպէս և մենք †\*, առիթ ենք ունեցել պարզելու, որ Եզրի դաւանաբանական միութիւնը ամենևին այն բնաւորութիւնը չունէր, ինչպէս խճողուած աւանդութիւններով պատկերացրել են մեր նախնիք: Հերակլ կայսրը և նորա խորհրդական Սերգիոս պատրիարքը ամենևին քաղկեդոնական չէին սովորական մտքով. ընդհակառակ նորա իրենց մի ներգործութեան և մի կամքի վարդապետութեամբ ընդառաջ էին զալիս հակաքաղկեդոնական եկեղեցիներին, որպիսին Եգիպտացոց, Ասորոց և Հայոց եկեղեցիներն էին: Նորա չէին հերքում Քաղկեդոնի վարդապետութիւնը, ինչպէս և չէին պահանջում հակաքաղկեդոնական եկեղեցիներէց նրա ընդունելութիւնը, այլ լրութեամբ և մի կամքի վարդապետութեամբ համակերպում էին մի բնութեան վարդապետութեան տրամաբանական եզրակացութեան: Մեր ձեռքը չէ հասել տարբարաբար Եզրի միութեան դաւանաբանական ձեռնարկը: Բայց մնացել է Եգիպտոսինը, որ կատարուել է 633 թուին Աղէքսանդրիայում՝ ժամանակի Կիրեղ պատրիարքի ձեռքով, ինն գլուխներից բաղկացած †\*\*, Դոցանից կարևորը եօթներորդն է, որտեղ բնութեան խնդիրը Կիրեղ Աղէքսանդրացու մտքով է բացատրուած և ապա աւելացրած, թէ մի և նոյն Քրիստոսը և իր ին ներգործում է և՛ աստուածայինը և՛ մարդկայինը մի աստուածամարդկային ներգործութեամբ—καὶ τὸ αὐτὸν ἓνα χριστὸν καὶ οὐὸν ἐνεργῶντα τὰ θεοπρεπῆ καὶ ἀνθρώπινα μετὰ θεοῦ ὁμοῦ ἐνεργεία—Հաւանօրէն, մօտաւորապէս նոյն ձևով պիտի կազմուած լինէր և Հայոց միութեան դաւանաբանական բանաձևը: Ժամանակակից Սերգիոսը

\* Православный Палестинский Сборникъ XI. Сп. 1892.

\*\* Հայաստանեայց եկեղեցին եւ Բիւզանդեան ժողովոյ պարագայք. Մոսկուա. 1892. եր. 124.

\*\*\* Շողակաթ. Ա. եր. 440.

† Ազգապատում, Կ. Պոլիս, 1912. էջ 694/5.

†\* Արարատ. 1907. յուճուար. եր. 87.

†\*\* Hefele. Concillongeschichte III. 1877 -- եր. 458.

ամենևին չէ յայտնում, որ Հերակլ կայսրը Եզրից պահանջած լինի ընդունել Քաղկեդոնի դաւանարանութիւնը, կայսեր տուած տուամարը միայն «ոչ էր նշուվեալ զժողովն Քաղկեդոնի»։ այդպէս էլ պէտք է լինէր, որովհետեւ քաղկեդոնականութեան բացարձակ նշովքը կլինէր անհամապատասխան կայսեր քաղաքական նպատակներին. նա կամենում էր միատարր կրօնականութիւն ստեղծել իւր պետութեան մէջ, գրաւելով մի բնութեան հետեոյ տղգերին, բայց և չգրգռելով քաղկեդոնականներին: Սերէոսի մէջ, ճշմարիտ է, չէ որոշուած կայսեր իսկական պահանջը, բայց չկայ և այնպիսի արտայայտութիւն, որ հակառակ լինէր պատմական իրականութեան: Քաղկեդոնի ժողովի մասին եղած լուրթիւնը կարող էր կասկածի առիթ տալ Մայրագոմեցու նման անձնաւորութեան, որ երկար տարիներ մաքառել էր քաղկեդոնականութեան դէմ, բայց աւելի չափաւոր տարրերը զժուարութիւն չպիտի տեսնէին միութեան ձեռք մեկնել յաղթական, բայց խաղաղասէր կայսեր: Մեր պատառիկի, Օրբէլեանի քաղուածքի, ինչպէս և միւս պատմիչների մէջ ցուցում կայ, որ կայսեր տուած ձեռնարկի մէջ Հայոց վարդապետները արատ չեն գտնում. բնական էր այդ, որովհետեւ այնտեղ քաղկեդոնականութեան մասին խօսք չպիտի լինէր, և ոչ թէ Եզրի և իւրայինների տգիտութեան արդիւնք, ինչպէս Յովհաննէս պատմագիրն է մեկնում:

Այս բացատրութիւնից յետոյ պարզ պիտի լինի, որ մեր գրութեան մէջ պատմական իրականութեան հակառակ է, կամ աւելի ճիշդ, շփոթուած է այն տեղեկութիւնը, որպէս թէ Հերակլը Եզրին քննութեան է տուել «զհաւատ նամակն Քաղկեդոնի», կամ բանակցութիւնը քաղկեդոնականութիւնն ընդունելու հարցի մասին էր: Այս հանգամանքը ցոյց է տալիս, որ հեղինակը պարզ զաղափար չունի բուն խնդրի մասին. նա ականատես և մասնակից չէ կատարուած իրողութեան, ուստի և խնդիրը լուսաբանել ու գունաւորել է իւր ժամանակի հասկացողութեան և աւանդութեան համաձայն: Քաղկեդոնականութեան ընդունելութեան հողի վերայ միութեան փորձ լինել չէր կարող ոչ Եզրի և ոչ նորա անմիջական յաջորդների ժամանակ. կոստանդին կայսեր կատարած փորձերն էլ ներսէս Գ-ի օրով քաղկեդոնականութիւնն ընդունել տալու փորձեր չէին, ինչպէս պատկերացնում է նաև ժամանակակից Սերէոսը, այլ շարունակութիւն Հերակլի եկեղեցական քաղաքականութեան: Սերէոսով չենք զբաղոււմ այստեղ, բուն խնդրից չհեռանալու պատճառով:

## Գ.

Մեր գրութեան հեղինակին ժամանակակից շհամարելով Եզրի միութեան փորձերին, յետին դարերի հետ էլ չենք կապում: Գրութեան բնաւորութիւնը հեռու է յետին դարերի աւանդութեամբ խճողուած հասկացողութեան: Նկարագրուած փաստերն ու դէպքերը համապատասխան են պատմական իրականութեան, բացի վերև ակնարկուած խնդրից, որ հեշտութեամբ շփոթուել կարող էր կարճ ժամանակից յետոյ: Սերէոսի լուութիւնը Կարնոյ մասին անլուծելի է մնում առ այժմ, թէև հաւանական է Եզրի Ասորոց երկիր զնալը նախապատրաստական նշանակութիւն ունէր Ասորոց միութեան համար, ինչպէս և ասորոց եպիսկոպոսների Հայաստան գալը բուն միութիւնից առաջ, համաձայն մեր ազրիւրի\*: Հերակլ կայսեր Վաղարշապատ գալը, և այցը կաթուղիկէին՝ պարսիկներին յաղթելուց յետոյ և Կարնոյ միութիւնից առաջ աւանդում է միայն մեր ազրիւրը միանգամայն իրականութեան կնիք կրելով. ի՞նչ միտք ունէր հեղինակի կողմից այդպիսի մի փաստի սարքելը, եթէ իրական չլինէր՝ հակառակ Սերէոսի և մեր յետին հեղինակների լուութեան: Վաղարշապատի մօտ Հոռոմոց մարզի և Ստաթէոս Ամատունեաց եպիսկոպոսի յիշատակութիւնը ունինք և Սերէոսի մէջ\*\* Ստաթէոս Սերէոսի մէջ կոչուած է Մատթէոս, որ Կոմիտաս Մամիկոնէից եպիսկոպոսի հետ մասնակցել է 614/5 թ. գումարուած Պարսկաստանի ժողովին, ուրեմն և համապատասխան մի անձնաւորութիւն կաթուղիկոսի մահուանից յետոյ՝ կայսերն ընդունելու

\* Յոյն ազրիւրները յիշում են Հերակլի մի բանակցութեան մասին Կարնոյ քաղաքում ոմն Պօղոսի հետ, բայց այդ իրողութիւնը պիտի կատարուած լինի 622 թիւին, երբ կայսրը արշաւում էր Պարսից դէմ: Mansi XI. եր. 529. համեմ. մեր աշխատութիւնը Entstehungsgeschichte des Monotheismus. եր. 17: Կարնոյ անունով մի ուրիշ ժողով յիշում է կատարուած «հրամանաւ մեծի թագաւորին Յուստինեայ. . . հանդերձ կաթուղիկոսան հայոց Սահական»: Ծեռագիրների մէջ պահուած են այդ ժողովի անունով ութ կէտից բաղկացած կանոններ, ուր նշուած են Լեւոնի տումարը բոլոր հերձուածողների հետ, հաստատելով Հայոց կեղեցու ծիսական աւանդութիւնները: Վաւերական են, քէ կեղծիք, այդ կանոնները կարօտ է յատուկ ուսումնասիրութեան. յամենայն դէպս Եզրի անուան հետ կապուած Կարնոյ ժողովի հետ աննշութիւն չունին:

\*\* Հրատ. Կ. Պօլսոյ. 1851. եր. 190. Համ. Հոռոմոց մարզի յիշատակութիւնը Յովհ. պատմ. Երուսաղէմ 1867, եր. 142.

պատուին: Ստաթէոս և Մատթէոս անուններէ տարբերութիւնը ձեռագիրներէ շփոթութեամբ պիտի բացատրել: Կայսեր այցելութիւնը կատարուել է Խոսրով Թագաւորի մահուանից յետոյ 628 թ. հաւանօրէն գարնանը կամ ամառուայ սկզբին, յամենայն դէպս Քրիստափոր Բ-ի ընտրութիւնից առաջ, որ ըստ Սերէոսի կատարուել է Կաւատի կողմից Հայաստանի մարզպտն նշանակուած Վարադտիրոց Բագրատունու առաջնորդութեամբ: Խոսրով վախճանուել է 628 թ. փետրուարի 29-ին, իսկ Կաւատի Թագաւորութիւնը տևել է ոչ աւելի քան վեց ամիս\*: Ահա այս վեց ամսուայ ընթացքումն էլ, բայց հաւանօրէն վերջին ամիսներում, կատարուել է Քրիստափորի ընտրութիւնը:

Եզրի միութեան կամ Կարնոյ ժողովի ժամանակագրութեան մասին ևս հակառակ Սերէոսի անորոշութեան, որ կարելի է 629 թուին ընդունել, Խաչվերացից անմիջապէս յետոյ, ինչպէս ընդունել է և Չամչեան, մեր աղբիւրը տալիս է աւելի ճիշդ ցուցում, այն է եզրի ընտրութիւնից մի քանի տարի յետոյ: Քրիստափոր կաթողիկոսը ըստ Սերէոսի իւր իշխանութիւնը վարել է երկու տարի և երրորդ տարին միայն գահընկէց եղել, որ չէր կարող աւելի վաղ, քան 630 թուի կէսերը լինել: Իսկ Ազէքսանդրիայի միութիւնը, որի հետ կապուած էր անշուշտ Հայոց և Ասորոց միութիւնները, կաաարուել է 633 թուին, այսինքն ճիշդ այն ժամանակները, երբ պէտք է գումարուած լինի Կարնոյ ժողովը մեր աղբիւրի ցուցման համաձայն: Օրբէլեանը Կարնոյ ժողովի թիւը նշանակում է եզրի կաթողիկոսութեան երրորդ տարին, այսինքն ճիշդ 633/4 թուին, անհաւանական չէ, որ այդպիսի տեղեկութիւն լինէր Տօնականի պատմութեան մէջ, որտեղից և քաղած պիտի լինի Օրբէլեանը:

Հայ աղբիւրներէ համաձայն Հայոց միութեան հետ Հերակլ աշխատում էր միացնել և Ասորիներին: Յոյն և ասորի աղբիւրներն էլ խօսում են այդ մասին: Թէոփանէս, Կեղրենոս և Յոնորաս չիշեղով Կարնոյ ժողովը, գրում են Հերակլի և Ասորոց Աթանաս պատրիարքի բանակցութեան մասին: Թէոփանէս 629 թիւն է տալիս այդ դէպքի համար (6121=629 թ. Ք. յ.), իսկ Կեղրենոս Հերակլի 35-րդ տարին՝ այսինքն 634 թ.\*\*: Յամենայն դէպս Հերակլ 634 թուին, Ասորիքումն էր\*\*\*, ուր կարող էր և ան-

\* Սերէոս. 4854. Կ. Պօլիս, Կր. 455. Nöldeke. Tabari. 382.

\*\* Տես մեր աշխատութիւնը Die Entstehungsgeschichte des Monothetismus. Leipzig 4897. Կր. 25—54.

\*\*\* Gelzer, Abriss der byzantinischen Kaisergeschichte. Krumbacher-ի gesch. dee byz. Litteratur. München 4897 Թ. Կր. 950.

ձամբ միութեան խնդիրը զեկալարել: Միքայէլ Ասորին որ այդ բանակցութիւնը կարնոյ ժողովից յետոյ է նշանակում, ուրեմն ոչ համապատասխան թէոփանէսին, այլ համաձայն կեղբենոսին, որովհետեւ 629 թուին Եզր դեռ ևս ընտրուած չէր, ինչպէս տեսանք, և ուրեմն միութեան խնդրով զբաղուել չէր կարող: Արտաքին այս վկայութիւնները ցոյց են տալիս, թէ ինչպէս պատմական է մեր գրութեան ժամանակագրութիւնը նաև կարնոյ ժողովի վերաբերմամբ:

Այնուհետև միութեան հետևանքով գումարուած ժողովը Պուին շահատանում, Մաթուսաղայի ձեռնադրութեան և «միահաւատ» դառնալու հակիրճ նկարագրութիւնը բղխում է իրերի գրութիւնից: Հերակլի կարին գնալուց առաջ Ասորոց եպիսկոպոսների «Հերակլէսի հրամանաւ ի քննութիւն հաւատոյ առ Հայք» գալը հաղորդում է միայն այս գրութիւնը և շատ համապատասխան է ժամանակի անց ու դարձին. դոքա նախապատրաստական աշխատութիւններ էին զլիսուոր գործի համար, ինչպէս Եզրն էլ Ասորոց երկիրն է գնացել ըստ Սերէոսի: Յոհան փակակալի անձնաւորութիւնը ընդգէմ ժողովի և Եզրի՝ նկարագրուած է աւելի համեստ և իրական պայմանների մէջ, քան նոյն իսկ Յովհաննէս կաթուղիկոս: Մայրազումեցու կրամ հալածանքը հաստատուած է և ուրիշ ազրիւրներով, Յովհաննէս կաթուղիկոս, Ասողիկ, Օրբէլեան այդ հալածանքը համարում են Եզրի կողմից՝ Փոտ Ներսէս Գ-ի կողմից, միայն ընդգէմ Մայրազումեցու, իսկ մեր ազրիւրը նաև նորա աշակերտների, որ աւելի համապատասխան է իրականութեան: Նոյն իսկ Ամատունեաց եպիսկոպոսի և Եզրի խօսակցութիւնը չէ կրում ոչինչ հակապատմական, բացի վերոյիշեալ քաղկեդոնական գունաւորութիւնից: Մեր պատմիչների տուած բաղմատեսակ տեղեկութիւնները ազացոյց են, որ թ. դարից առաջ Եզրի միութեան կամ Յոհան Մայրազումեցու մասին եղել են տարբեր եղանակաւորութեամբ գրութիւններ և աւանդութիւններ, որոնցից հնագոյններից մէկը այս գրութիւնն է:

Մեր եզրակացութեամբ գրութեան հեղինակը ժամանակակից կամ ակնառես չէ կատարուած իրողութեան, բայց շատ էլ հեռի չէ: Վերնազիրը ցոյց է տալիս, որ նա մի տեսակ վկայարանութիւն է, գրուած ի յարգանս Մայրազումեցու. իսկ այդպիսի մի գրութիւն կարող էր ծագել շատ վաղ, է. դարու վերջերին, կամ Բ. դարու սկզբին, երբ ըստ Օրբէլեանի Սողոմոն Մաքենացին գրել և կարգաւորել է իւր Տօնականը: Եթէ Սողոմոն Մաքենացին չէ նորա հեղինակը, քիչ առաջ մի այլ ժամանակակցի գործ պիտի լինի: Վերջին դէպքում պէտք է ընդունենք, թէ Մաքենացին առել է այն իւր Տօնականի մէջ մի այլ

տեղից, իսկ Տօնականից օդտուել է Օրբէլեանը:

Այսպիսի ենթադրութեան հիմք է ծառայում այն հանգամանքը, որ Օրբէլեանի և մեր գրութեան մէջ մեծ նմանութեան հետ, կան որոշ տարբերութիւններ մտքերի դասաւորութեան և կապակցութեան մէջ. Օրբէլեան մինչև լուծ է կայսեր խօսակցութեան մասին հայ եպիսկոպոսների և իշխանների հետ Վաղարշապատում, որի պատճառը իւր աղբիւրը կարող է լինել:

Սպասենք գրութեան ամբողջութեան գիւտին, որ գուցէ մեր եկեղեցական պատմութեան այս հետաքրքրական, բայց մութ շրջանի վերայ նոր լոյս սփռէ:

## Գ.

Մայրագոմեցու պատմութեան այս հատուածն առնուած է Երուսաղէմի Հայոց մատենադարանի № 1272 ձեռագրից, կաշեկազմ, 16, 2×12 սմ. մեծութեամբ: Կազմի ներսի երեսի մետաքսի կտորը արժանի է առանձին ուշադրութեան. մի ձերունի՝ սպիտակ երեսով՝ Յիսուս գրկին, կողքին հրեշտակ կանգնած, ձերունու գլխին՝ հաւասարակող խաչ: Ծերունու հագուստը կարմիր է, ծալքերը կապոյտ: Գիրը սիրուն բոլորգիր է, 13×9 սմ., նիւթը՝ թուղթ: Ժամանակ՝ ՉԼթ = 1290 թ., գրիչ՝ Բարսեղ քահանայ:

Չեռագիրը բովանդակում է մեր ներկայ հատուածից գատ՝ ի միջի այլոց նաև՝

ա. 130<sup>թ</sup>. Յոհանիսի Հայոց վարդի, որ մականունն Կոզեան, ասացեալ վն վարդավառի տաւնին, եթէ վն էր յընթերցուածն ոչ շարադրեցաւ ոչ ի Յակոբայ մեծէ, որ է եղբայր Տն, և ոչ ի Կիւրդէ, և ոչ զկնի նոցա յայլոց վարդապետաց և առաջնորդաց եկեղեցւոյ: Սկս. Այսպէս ծանուցին մեզ բանաբունքն զպատճառս խորհրդոյն...

բ. 376<sup>մ</sup>. Հարցմունք Վրաց եպիսկոպոսի ի Հայոց վարդապետէ Սարկաւազէն

Սկս. ի դիմաց գերելոյ ժողովրդեանն ի Բա-  
բելոն մատուցանէ\*...

գ. Նորին Յոհաննու քահանայի հայոց վարդապե-  
տի, որ ըստ մականունութե սարկաւազ, վասն  
մասանց պատուոյ, յորում և վասն պատկերաց  
դարձեալ.

Սկս. Յանտեղիսն ճարտարագոյն և հանճա-  
րեղք յանբանութի ոմանք խառնակել զպարգա-  
գոյնս յիրաց ոչ վեհերեն...

դ. 406<sup>ա</sup>. Յոհանիսի վղի Եզկայեցոյ (s!)ասացեալ բանք  
չափաբերականք ի խրատ մարդկային բնութես  
և ի գոհութի ա՛յ

Սկս. Սւրհնեալ ա՛յ անուն միշտ կենդանոյն...

ե. 417<sup>բ</sup>. Բուն գրչի յիշատակարանը.  
Զնուաստ Բարսեղս, որ գայս գրեցի,  
խրատ ամէն մարդոյ ի բարի  
յիշման ալրէք դուք զիս արժանի,  
զի բարի տ՛րն ինձ ողորմեսցի  
և ծնողացն իմոյ յոյժ բարի.  
դյիշողքդ յիշէ տ՛րն յամենայնի:

Ի թու՝ Հայոց ԶԼԹ. գրեցաւ պիտանի տառս ա՛ծային  
ձեռամբ նուաստ քահ՝ Բարսղի. ի թգ՝ ք՛սասիրի և բարե-  
պաշտին Հեթմոյ որդւոյ Լևոնի, որոյ ք՛ս ողորմեսցի. և  
պահեսցէ զբարի թ՛գ մեր Հեթ. հարապատաւք իւր և որք  
աւկտիք ի սմանէ, մեղաց թողութի հայցեցէք յա՛յ Բարսղի  
և ծն՝ իմոց և ա՛ծ յիշողացս ողորմի:

Գարեգին Եպիսկոպոս

\* Այս հատուածի մէջ Սարկաւազ վարդապետը օգտուել է  
Որոգինէսի խաւսք ի Յոր. գիրք հինգերորդ երկից, ինչպէս յայտնել  
ենք «Լերարատի» սոյն թուի փետր.—մարտ համարի մէջ, եր. 197:

## (Պ) ԱՏՄՈՒԹԻՒՆ ՅՈՂԱՆՆՈՒ ՄԱՅՐՈՎՈՒԹԵՑԻՈՅ

(Ձեռագիր Երուս. № 1272)

- 391<sup>F</sup> Յետ մահուանն Մաւրկան գնաց Հերակլ ի Հոռոմս և սպան զՓոկաս ի Կոստանդինուպօլիս և թագաւորեցոյց զՀերակլէս զորդի իւր: Եւ յեթն ու տասն ամի թագաւորութեան իւրոյ գնաց Հերակլէս ի պատերազմ յերկիրն Պարսից, և հար զնոսա և փախստական արար զՊոսրով և հտուն ի նա ձեռս Այրեաց
- 392<sup>W</sup> աշխարհն և նորս հրամանաւ թագաւորեցոցին զԿալատ զորդի Պոսրովու և յետ աւուրց ինչ սպանին զՊոսրով և թագաւորն Հերակլէս տիրեաց ամենայն երկրիս Հայոց: Եւ եկեալ բնակեցաւ յԱրարատ գաւառ ի Հոռոմոց մարզի մերձ Վաղարշապատ քաղաք:

Յայնժամ զնաց Ստաթէոս Ամատունեաց եպիսկոպոս ամենայն վանից երիցամբք սրբոյ կաթուղիկէի առ թագաւորն և երկրպագեցին նմա և տղաչէին՝ զի երթեալ աղաւթեսցէ յեկեղեցին սուրբ: Եւ ասէ ցնոսա. «Մինչ հնազանդութեան աւրինացն չհամարիք զիս արժանի, և աղաւթելոյ մի առնէք արժանի»: Ասին ցնա. «Բարեբար արքայ, և ով է, որ արգելու ի ձէնջ զաւրէնան:

- Ապա գնաց աղաւթեաց ի սուրբ եկեղեցիսն, և հտուն նմա հաղորդութիւն և ամենայն զաւրուն, որ ընդ նմա: Եւ յետ այսորիկ հրաման ետ թագաւորն գալ առ նա ամենայն եպիսկոպոսացն և ամենայն իշխանացն, և ի գալն առ նա, ասէ ցնոսա. «որովհետև Աստուած զթշնամին իմ եզ ընդ ոտիւք իմաւք, իմ այլ հոգք յերկրի ոչ են, բայց վասն հաւատոյս. ահաւասիկ ես գնամ ի Հոռոմս և ձեզ անդարձ և պատուէր լիցի հոգ ունել յանձինս վասն սուրբ հաւատոյն խորհել զտիւ և զգիշեր ի գիրս սուրբս, և յոյժ վերահայեցիկ լինել գիւտ ի սուրբ հաւատոյն, եւ ես աւասիկ գնամ և ժողովեմ զամենայն ճարտարս յունաց և ամենայն սլատրաստութեամբ դառնամ այսրէն ի Կարնոյ քաղաք և զԱսորիս անախի կոչեմ և զձեզ աստի և յաւէտ խորհրդաբերութեամբ քննութիւն առնեմք հաւատոյս, և հաւատ որ ճշմարիտ է, յայն հաւատամք. և այլ երկպառակութիւն վասն հաւատոյ մի լիցի»:

393<sup>ա</sup> Զայս հրաման տուեալ թագաւորին, զնաց. և ի զնալն նորա նստուցին զՔրիստափոր ի հայրապետական աթոռն. և փոխեալ զնա նստուցին ի սուրբ աթոռն փոխանակ նորա զԵզր: Եւ յետ ամաց ինչ եկն թագաւորն ըստ ժամադրութեանն ի Կարնոյ քաղաք. և կոչեաց առ ինքն զամենեւեան և զնացին առ նա ասպետն և ամենայն իշխանայքն (sic!) և Եզրի կոչեալ զՄաթուսաղայ զՍիււնեաց քերթող, զի նա էր գլուխ վարդապետաց Հայոց և նմա պատուիրեալ էր Հայոց պատրաստ լինել հանդիսին, յորժամ զայցէ թագաւորն: Նորա յապաղեալ արձակեաց զթէոդորոս զաշտկերտ իւր, զեզրաւորողի Կոմիտասայ Հայոց կաթողիկոսի. և Եզրի կալեալ զնա յառաջնորդ, զնաց ամենայն եպիսկոպոսաւքն ի հանդէսն և ետես զնոսա թագաւորն, ուրախ եղև և բերկրեցաւ:

393<sup>բ</sup> Խաւսել || սկսաւ ընդ նոսա և ասէ. «Իմ այսր գալ ոչ վասն երկրաւոր հոգոց ինչ է, այլ վասն սուրբ հաւատոյս և աստուածային սիրոյն, զոր ունիմ առ սուրբ եկեղեցիս Քրիստոսի. յամենայն մասունս բարեաց, զոր արար առ իս Քրիստոս, ուրախ եմ. զի ետ զամենայն թշնամիս իմ ի կոխումն ոտից իմոց, բայց զայս մասն տրտում եմ ես, որ ոչ է միաբանութի հաւատոյս Հոռոմոց և Հայոց, բայց թող զի մտանէք ի քննութիւնն աստուածին գրոց և գտանէք զճշմարիտն և մի անհաւատ լինիք ի մի Տէր Յիսուս Քրիստոս»:

Ետ պատասխանի Եզր կաթողիկոս և տսէ. «Բարեբան արքայ, չէ պիտոյ քննութեան. կարճ բանք են, եթէ կամիք միաբանութիւն աննել, ի բաց թողէք զժողովն Քաղկեդոնի և մեր միաբանութիւն լեալ է»:

394<sup>ա</sup> Ետ յաթոռոյ իւրմէ և առ զհաւատ նամակն Քաղկեդոնի և եզ ի վերա սրբոյ խաչին և ասէ. «այս բարի Աստուծոյ (ձեռ. ա՛յ) զիտէ, այս է հաւատն ժող(ով)ոյն Քաղկեդոնի. ահա, տէր կաթողիկոս, տարէք, քննեցէք զգա և զթերութի զորս յայտ արարէք և ես ամենայն պաղատաւս զժողովն Քաղկեդոնի նզովեմ, և զգիրտ ի հուր ծախեմ»: Առին զգիրն\* և չոզան ի բանակն իւրեանց և հետազաւտեցին զգիրն զերիսաւուրս և ոչ կարացին գտանել ի նմա զարատն:

Ասէ Եզր կաթողիկոս ցասպետ իշխանն Հայոց. «ոչինչ կարաց գտանել քերթողն մեր ահոկ ի սահմանիս Քաղկեդոնի, զոր ետ թագաւորն և այլ վարդապետքն ցմեզ»\*: Ասէ

\* Ձեռ. «առ ինչ զգիրն»:

ցնա ասպեան. մինչ ևս պատուիրեցի քեզ, թէ մի առանց  
Յոհաննու գար ի հանդէսն, դու զի՞ թողեր զնա: Եւ նա ասէ.  
394<sup>բ</sup> «ամենեքեան այդ || պէս ասացին, թէ մինչ Մաթուսաղայի  
աշակերտն ընդ մեզ է, չէ ինչ նա պիտոյ»:

Ապա գնացին ամենեքեան առ թագաւորն և ասեն.  
«Բարերար արքայ, զսահման հաւատոյս, զոր ևսուր ընթեր-  
ցաք և հաւասար ուղղափառ վարդապետացն դտաք զկտակս  
զայս. բայց այս մասամբք խիղճ է ի միտս մեր՝ հաղորդել  
ընդ քահանայս ձեր, զի զպոռնկութիւն չհամարին մեղս-  
վասն որոյ և նոյն աւրէնս տան պղծելոցն ի բողոքոցսն և  
զպղծութիւն աղտեղութեանն բողանեալք սրբն և զայլ ամե-  
նեանս չարիսն հաղորդութեամբ աւրինացն քաւեն»: Ասէ  
թագաւորն. «մեր պայքարս չէ վասն գործոց, այլ վասն սուրբ  
հաւատոց. դուք ասէք, թէ ժողովն Քաղկեդոնի բաժանէ զմեզ  
և զձեզ, միթէ ի Քաղկեդոնի կարգեցին զբողոքոցացն իրս.  
395<sup>ա</sup> թէ այդ պատճառք են մեր և ձեր բաժանման, ապա նախ  
զնիկիա ժողովն և զկոստանդնուպաւլսին և զԵփեսոսին նզո-  
վեցէք, զի զբողոքոցաց հրապոյրս առաջին թագաւորացն է  
կարգեալ և ոչ Քաղկեդոնի, ի Հոռոմս պոռնկութիւն և եթ  
գործի, բայց ի Հայք շնութիւն և պոռնկութիւն և սպանու-  
թիւն, ընդ նմին և արուագիտութիւն և անասնագիտութիւն  
գործի. վասն այդպիսի չարեաց կարգեալ է զբողոքոցսն:  
Ա՛րդ, դուք զայն ամենայն չարիս ի Հայոց բարձէք, ևս  
զպոռնկութիւնն ի Հոռոմոց բառնամ. մեր բանքս վասն սուրբ  
հաւատոյս են, դուք զՔաղկեդոնի ժողովն ունիք պատճառս,  
ա՛րդ, աւանիկ յանդիման ձեր է զիրաւ և ոչ կարացիք գտա-  
նել ահոկ»:

395<sup>բ</sup> Լուռ եղեն և ոչ կարացին տալ պատասխանի: Խորհուրդ ||  
արարին առանձին Եզր կաթողիկոս և որք ընդ նմայն էին.  
Թէ զինչ պարտ է առնել: Խաւսել սկսաւ Թէղզորոս Մաթու-  
սաղայի աշակերտն, թէ մինչ հաւատոյ խոստովանութիւն  
մի է մեր և դոցա, բուն արմատ դոքա են, մեք ոստքն հմք,  
մեր ամենայն կրաւնք և կարք (sic!) ի դոցանէ են, զիա՛րդ  
ոչ մարթի հաղորդել: Հաղորդել արժան է և աւրհնել զժո-  
ղովն Քաղկեդոնի և հաւասար ունել նիկիականին և լինել մի  
ազգք (sic!) և մի ժողովուրդ Աստուծոյ: Հաւանեցան նմա  
և մտին անդէն առ թագաւորն, յանձն առին հաղորդել ընդ  
նոսա, և ի վազիւ անդր մատուցին պատարագ ի վերա սե-  
ղանոյն նոցա և յիշատակեցին ի պատարագամատուցին զժո-  
ղովն Քաղկեդոնի ընդ այլ ժողովսն, որպէս սովորութիւն է

396<sup>m</sup> քաղկեդոնականացն և հաղորդեցան ընդ միմեանս: Եւ ետուն վճիռ այլ ոչ ևս խոտել զժողովն Քաղկեդոնի:

Խնդրեաց Եզր ի թագաւորէն, զի տայցէ նոցա զսահման Քաղկեդոնի ժողովոյն նոր գրով. և գրեցին ծիրանեաւ և կնքեաց թագաւորն մատանեաւ իւրով և ետ նոցա և եկին ի Դուին շահաստան: Եւ եկն Մաթուսաղայ ի Սիւնեաց և ընկալաւ ձեռնադրութիւն եպիսկոպոսութեան յԵզրէ և միաբանեցան ամենեքեան և միահաւատ եղեն, և հոտորարանէր յայնմհեալ: Թէսգորոս Մաթուսաղայեան և ներքողումն անէր զովեստական բանիւք ժողովոյն Քաղկեդոնի և հնազանդէին նմա ամենեքին, ըայց ի Յոհանայ (s!) և ի նորին աշակեր-

396<sup>f</sup> տացն, որ ոչ հնազանդեցան, անկան ի բախնդ և ի պատուհաս և ի հալածանս ի ներսիսէ Տայեցո\* Հայոց կաթողիկոսէ: Յաւուրս Մաւրկա թագաւորի Ենովս երանելի ընտրեցաւ, որ ոչ հնազանդեաց\*\* անիծեալ ժողովոյն Քաղկեդոնի և յաւուրս Հերակլի կայսեր Մայրազոմեցի և այլ ոչ:

Յառաջ քան զգալն Հերակլէսի ի կարնոյ քաղաք, եկին եպիսկոպոսունք յԱսորոյ Հերակլէսի հրամանաւ ի քննութիւն հաւատոյ առ Հայք և նայ (s!) Թէսգորոս եկեալ ի Սիւնեաց ի քննել զնոս. և միաօրեցան ընդ նոցա: Բայց Քրիստափոր կաթողիկոս ի հոռի ճանապարհէր, ապա ի գալն նորա խնդրեցաւ ի Յոհաննէ Մայրազոմեցոյ . . .

\* Զուրմ Տայեցոց:

\*\* Ընդգծուածը գրուած տողի վերայ: